# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ. 4 շ., Հեռ. (094) 248414 ,
geghadir.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

N 126
*28 օգոստոս 2017թ.*

Հարգելի պարոն մարզպետ.

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն, Ձեզ է ուղարկվում Գեղադիր համայնքի ղեկավարի որոշումները :

Առդիր 3 թերթ:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Մուրոյան*
*Հեռ. 096161060*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2017թվականի N 46-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,22,22.1կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ռիմա,Սևակ,Սամվել,Մարինե Կարապետյաններին պատկանող Կոտայքի մարզի Գեղադիր գյուղի 3-րդ փողոցի թիվ 50 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 172,4քմ մակերեսով բնակելի տան, 92,8քմ մակերեսով կիսանկուղի և անցումի, 70,3քմ անասնագոմի օրինականացման դիմումը և այն,որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի և տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված ցանկում, ինքնական կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը,շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով ,չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1.Ռիմա,Սևակ,Սամվել,Մարինե Կարապետյաններին պատկանող Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի 3-րդ փողոցի 50-րդ հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2006թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինամանացման կարգը հաստատելու մասին>>N912-Ն որոշման 13-րդ կետի համաձայն տեղական բյուջե 60 օրվա ընթացքում՝

1) 265.2 X 1100 = 291 720 դրամ,
2) 70.3 x 660 = 46 398 դրամ,
Ընդամենը 338 118 դրամ մուծելով հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. օգոստոսի 11
գ.Գեղադիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողադիր, (094) 248414, goghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 օգոստոսի 2017թվականի N 47-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջով և հաշվի առնելով քաղաքացի Արթուր Կարապետյանի խնդրանքը՝որոշում եմ.

1.Արթուր Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող՝Կոտայքի մարզի Գողադիր գյուղի 4-րդ փողոցի թիվ 16 հասցեում գտնվող 05707 հա մակերեսով տնամերձ հողամասից առանձնացված 015 հա հողամասին տրամադրվել է՝ Կոտայքի մարզ գ.Գողադիր,4-րդ փողոց 16/1 հասցեն:

2.Չառանձնացված մասին՝04207քմ. հողամասին և բնակելի տանը տրամադրվել է՝Կոտայքի մարզ,գ.Գողադիր 4-րդ փողոց 16 հասցեն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

2017 թ. օգոստոսի 16
գ.Գողադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2017թվականի N 48-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ որոշում եմ.

1.2017թվականի օգոստոսի 17-ին ժամը 11-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով՝
1)Գեղադիր համայնքի ավագանու 1017թվականի օգոստոսի 8-ի N33-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. օգոստոսի 16
գ.Գեղադիր